



36. ԿԲՐԵ ԿԱՐԱՍ

Հըլնում են, չեն հըլնում, մե մարթը-կնիկ են հըլնում: Էս մարթը կնգան հըլնում ա իրեք ախճիկ, հըմա պստիկը շատ խորոտ ա հըլնում: Էս մարթի կնիկը մեռնում ա: Որ կնիկը մեռնում ա, էթում ա թագա կնիկ ա բերում ա: Ոորթ մերը ըչկով ըչկ չունի ախճիկներին տենալու, ուզում ա մե յանով անա, կորցնա:

Մե օր էլ խորթ մերը մարթին ասում ա.—Ա՛յ մարթ, էտ էրեխեքին տար թող մե տեղ, կորագլո՛խ արա, արի, թե չէ կըտամ յա հիւրանցը կըսպանեմ, յա թե չէ ընձի կըսպանեմ: Ես քո կնգա եթմները պախող չեմ, ես քո էրեխեքի քոծը չեմ, մառթ եմ առե, որ ես էլ մե օր տենամ աբրեմ:

Մարթը շատ ա համոզում, բայց հնար չի հըլնում: Կնիկը էրկու ոտը դրեր ա մե սուլի մեջ, թե՛ չէ, որ չէ:

Ոսեմ մարթը տեսավ էլ չի կարողանում համոզել, վերցրեց էրեխեքին, իրեք խատ էլ գարեխաց, գնաց մե բանցր սարի գլոխ կայնավ, ախճիկներին ասավ.—Էս իրեք գարե խացը քցում եմ գլոր, որ դուք հետևից էթաք: Որդե կըկայնեն, ընդե կըվերցնեք, կըգաք, կէթանք տունը:

Գարե խացերը քցեց, ախճիկները հետևից վազան, խասան սարի տակը, նոր բռնին:

Էրեխեքը որ գացին խացերի հետևից, խերը մե փետ տնգեց, հիւրա պենջակը խաքցրեց փետին, փափաղն էլ դրեց գլոխը ու հինքը փախավ, գնաց տուն:

Ախճիկները սարը ելվեր հելան, անջաղ-անջաղ էկան խասան սարի գլոխը, տեսան խերը չըկա, պենջակն ու փափաղն ա ըստե: Կոտը կա, կուրտիկը կա, բաբոն չըկա: Նստան լացան, լացան, հելան, որ էթան տունը, հըմա ճամբեն չեն ճանչնում:

Ըստե պստի քուրն ասավ.—Ըստե գալու վախտը ես մե փեշ զղզիկ ի հաֆկե, որ խաղամ: Մենք, որ էկանք, ծանդը էր, ես ջոկի մեկ-մեկ վատերը թնփի, չանքի խասանք սարի գլուխը: Էկեք էտ զղզիկների իղը բռնենք, էթանք:

էտ զղղիկների իզով գացին, գացին, խասան Հիրանց տունը:
Մերը, որ էրեխեքին տեսավ, կատղավ, մարթին ասավ.—Տար
կոոցրո՛ւ, կըտամ, իրեքին էլ կըսպանեմ, մազները կըփիտեմ, ըչկ-
ները կըխանեմ, անոթի կըսատկցնեմ:

Վերչը մարթը տենում ա, որ մեկ ա, կնգա վրեն չի կանա,
բռնում ա էրեխեքի ձեռից, լնլով, մխկտալով տանում ա մե անծա-
նոթ սարի գլոխ թողում ա ու Հինքը գալում ա տուն, կնգան ասում
ա.—Տարա կոոցրի, էլ ետ չեն գա:

Մկա մենք խաբար տանք ախճիկներից:

Խելսճ ախճիկները, վղները ծռած, մե քանի օր անոթի-ծարավ,
մնում են էտ սարի գլոխը:

Որ չատ են անոթնում, մեծ քուրն ասում ա.—էկեք իրեքով էլ
շոենք, վիր շեռը փոփռով հըլնի, ընդրան ուտենք:

Իրեքով էլ համաձայնվան ու շոին:

Պատի քվոր շեռը փոփռուով էր: Ուզին պատի քվորն մոռթեն
ուտեն:

Քորն ըսավ.—Քույրիկնե՛ր ջան, թողեք գլոխս դնեմ ձեր չոքին
մեշու քնեմ, էն վախտը մոռթեք կերեք:

Ախճիկը գլոխը դրեց ջոջ քվոր չոքին, որ քնի:

Մատով խողը քանդեց, էրկու խատ ցորնի խատիկ քթավ: Մե-
կը տվեց մե քվորը, մեկը տվեց մեկէլ քվորը, մատներն էլ Հինքն ա
լիզում: Մեշու էլ փորում ա, մե ծակ ա բացվում: Քանդում են, քան-
դում, ծակը լեննում ա: Պատի քվորը էտ ծակով կախում են ցածր
ու բաց թողում: Ախճիկը հընգնում ա ջետինը, տենում ա՝ հընգավ
ձիանքի մսուրքը: Ինչ ձի, ամեքը մե ազրայել:

Տենում ա՝ մսուրքի մեջը չամիչ կա, լցում ա փեշը, քուրերին
ասում ա՝ քաչե՛ք:

Քաչում են ախճկան խանում են, չամիչն ուտում են, քչերն էլ
մտնում են քարերի տակը քնում:

էս տեսակ ամեն օր պատի ախճիկը մտնում ա էտ ծակից, չամի-
չը խանում ա, ուտում են:

Թաքավորի տղեն տենում ա՝ ձիանքը առդղնում են: Միտք ա
անում, միտք ու գլոխ չի խանում, թե հընչեն առդղնում: Որոշում ա
բուսում պախա, տենա Հո գող չի մտնում թավլեն: Թե ձիանքը խի-
վանդ հըլենն, չամիչը չեն ուտի, չամիչը չի հավլնում, ուրեմն ըստե
մե բան կա: Թաքավորի տղեն չամիչը լցեց ձիանքի հառեչը, հինքը
մտավ մսուրքի տակը: Մեկ էլ տեսավ մե բան թմփաց: Հելավ տե-
սավ մե խորոտ ախճիկ, չամիչը ձիանքի հառեչից հափկում ա, լցում
ա փեշը:

Խասաւ, ախճկա թւից բռնեց խառցուց.—Սիրո՛ւն ախճիկ, ասա տենամ, դու ի՞նչ ախճիկ ես, որ գողուլթյուն ես անում:

Ախճիկը վախեցաւ, վայ արաւ:

Թաքավորի տղեն ասաւ.—Ախճի՛կ ջան, մի՛ վախեցի, ես չեզի վնաս չեմ տա, մինանկ ասա, տենամ՝ ի՞նչ ախճիկ ես, չեզի ազատ կըթողեմ:

Ըստեալ ախճիկն սկսեց պատմել, ինչ որ խորթ մերը բերեր էր Հիւրանց գլուխը, չանքի թաւլեն մտնելու օրը, էն էլ առանց Հիմանալու, Հիրանց բախտից էր, որ ծակ բացվաւ, Հիրանք փրգվան:

Վերջը ասաւ.—Թե որ էս ծակը չըբացվեր, իմ քուրերը որոշեր ին անոթութունից ընձի ուտին:

Ըստեալ թաքավորի տղեն ախճկան ասաւ.—Սիրո՛ւն ախճիկ, չեզ էլ քո քուրերին էլ բան չեմ ասի, ըստե մացե՛ք, ես էթամ խաց բեռեմ:

Պատի քուրը գնաց, էրկու քվորն էլ բերեց, էտ ծակից մտան թաւլեն, մե քունջը նստան, սկսին չամիչ ուտել, իսկ թաքավորի տղեն գնաց մե դաստիսուն խաց, միս, չնրնզ բերեց, ախճիկները կուշտ ճերան, ջուր խման, սկսին խաղալ ու երգ ասել, Հիրանք կմշտել:

Թաքավորի տղեն իրեք քվորն էլ շոր բերեց, խաքան ու մե քանի տարի ըստե մացին, չանքի պատի քուրը Հելաւ տասնվեց տարեկան: Որ պատի քուրը Հելաւ տասնվեց տարեկան, միչնեկը տասնութ տարեկան էր, ջոջը՝ քսան: Հըմա պատի քուրը շատ խորոտ էր, արևի նման լուս էր տալում:

Թաքավորի տղեն իրեք քվորն էլ տարաւ Հիրա խոր մոտ ու խորն ասաւ.—Հայրի՛կ, Հլա՛ խարցրո՛ւ տես՝ էս ախճիկներ ի՞նչ շնորքի տեր են: Որը լաւ շնորքի տեր հըլնի, ընդդան ես կառնեմ, մեկը կըտանք վազրի տղին, մեկն էլ՝ վաքլի տղին:

Թաքավորը ախճիկներին խառցնում ա, թե ի՞նչ շնորքի տեր են:

Ջոջ քուրն ասում ա.—Թաքավո՛ր, թե ընձի ուզես քո տղին, քո զորքի խըմար օխտ հռանգի խալիչա կըգործեմ, էնենց խալիչա, որ քո բոլոր զորքը կայնի վրեն, Հլա՛ ճեսը դառտակ մնա:

Միչնեկ ախճիկն ասում ա.—Թաքավո՛ր, թե ընձի ուզես քո տղին, ես քո զորքի խըմար օխտը տեսակ ճաշ կըպաղրաստեմ, որ իչքան ուտեն, էլի՛ ճեսը մնա:

Պատի ախճիկն ասում ա.—Թաքավո՛ր, թե ընձի ուզես քո տղին, ես ոսկե ճկութ, ոսկե չնչուլ տղա կըբերեմ, էլ հուրիչ շնորք չունեմ:

Թաքավորի տղեն ասում ա.—Ա՛յ խեր, կա-չըկա, պատի քուրն ա իմը, թո ես ոսկի չնչուլ, ոսկե ճկութ տղա ունենամ, էլ բան չեմ ուզում:

Թաքավորը բերում ա, տղին պսակում ա պստի քվոր խետ, ջոչ քուրը տալում ա վազրի տղին, միչնեկ քուրը տալում ա վաքլի տղին: Ոնչ ջոչ քուրն ա հիր խոստումը կատարում, ոնչ էլ միչնեկը: Թեւ են բերում, որ ջոչ քուրը խալիչա գործա, չի կանում, ջով են բերում, որ խսիլ գործա, էտ էլ չի կանում:

Ամեն տեսակի մթերք են բերում, որ միչնեկ քուրը օխտը տեսակ ճաշ էփա, վոփկ էփեւ էլ չի կանում:

Թաքավորն ասում ա.—Վա՛յ, վա՛յ, տենանք պստի քուրն ինչ կանա:

Ինն ամիս ետո պստի քուրը ոսկե չնչուլ, ոսկե ճկուլթ տղա յա բերում, հըմա քուրերը նախանձից տատմորը ոսկի են տալում, էրե-խեն վեոցնում ա, մոր ծոցը շան թուլւն յա դնում:

Էս ոսկե չնչուլ, ոսկե ճկուլթ տղին դնում են մե ղուլթու մեչ, քցում են ջախճի հնուուն:

Ուարարը տանում են թաքավորին, թե չես ասի, էսենց, էսենց բան: Քո խառըր ոսկե չնչուլ, ոսկե ճկուլթ տղի տեղակ մե խատ շան թուլւն բերե:

Թաքավորն ասում ա.—Օխտը գույնի խալիչա գործողը խսիլ գործել չըկառցավ: Օխտը տեսակ ճաշ էփողը վոփկ էփել չըկառցավ, որ ոսկեչնչուլ, ոսկեճկուլթ տղա բերողը շան թուլւն բերի, շա՞տ բան ա: Իրեքն էլ մե սանդղի կտավ են:

Թաքավորը հրաման ա տալում խառսին դնեն կրե կարասը, հերեսը մրեն, տանեն դնեն օխտը ճամբի մեչտեղը, որ էթող-գալողը թքա հերեսը: Կրե կարասի վրեն էլ գրում են թաքավորի հրամանը. «Որը չըթքա էս կնգա հերեսը, գլոխը կղրել»:

Պահակ ա կայնցնում, տարիներ են հնցնում, էթող-գալողը թքում ա թաքավորի խառսի հերեսը: Թագավորի տղեն կնգան շատ էր ուզում, իչքան խորն աղաչում ա, որ «Իմ կնիկը մեխկ ա, բերենք», թաքավորը հրամանը չի փոխում ա:

Մկա խաբար տանք ոսկե չնչուլ, ոսկե ճկուլթ տղից, որ ջա-ջու պառավը փաթթուկեց շորի մեչը, դրեց յաչիկը, քցեց ջախճի հնուունը:

Էս էրեխին ջուրը տարավ ջախճի նավին բանդ արավ:

Ջախճի քարը քռո կայնավ: Ջախճիփանը դուս էկավ, վազավ նավի յանը, տեսավ մե յաչիկ էկե նավի հնուեչը բանդ ա հելե: Ծուտ յաչիկը խանեց, բերեց ջաղաչը, բացեց, տեսավ մե խատ խորոտ նորհելուկ էրեխա: Էն էլ ինչ էրեխա, մե տասնխնգուկ լուսնակ, ոսկե չնչուլ, ոսկե ճկուլթ տղա:

Դանչիներին ասավ, որ հիրանք ջաղաչը յոլա տանեն, հինքը էրեխեն տանա տունը գա:

էրեխեն տարավ տունը, տվեց կնգան, կնիկը շատ ուրիշցավ, ասավ. — Մա'րթ, Աստված մեր յանից ա: Վեց էրեխա բերի, բերքից կդրա, Հրմա Աստված օխտը թմմեց: Ես էլ ասացի. «Օխտը թմմեմ, բոլ ա»: Փարքտ շա՛տ, Աստվա՛ծ:

Ջախսճիանի կնիկը բերեց էրեխին փաթթեց, դրեց օրորոց, քնցրեց: Ջախսճիանն էլ գնաց ջաղաչը:

Տան պատիկը տան ծաղիկն ա: Էս էրեխեն էլ դաճոցավ ջախճ-փանի տան ծաղիկը: Ախպերներն էլ, քուրերն էլ սաղ օրը էս էրե-խին հիրանց թեւերի վրեն ին պախում, խախծնում: Ջախսճիանն ու ջախսճիանի կնիկը, որ տեսան տղեն ոսկե չնչուլ, ոսկե ճկուլթ ա, գլոխն էլ չորով կապին, ճկուլթն էլ, վախեցան էրեխին մե փորցանք գա: Ջին ուզում, որ հիմանան էրեխեն ոսկե ճկուլթ, ոսկե չնչուլով ա: Տղեն դաճոցավ տասը տարեկան:

Մե օր էլ մորն ասավ. — Ա՛յ աղե, ոնչ իմ գլոխն ա ցավում, ոնչ էլ մատս ա ցավում, հընչե՞ք գլոխս էլ կապում, մատս էլ:

Մերն ասավ. — Թո խերտ գա տունը, խորտ խաոցրո՛ւ:

Տղեն մնաց մտածելով, տաշտից մե լոշ վեոցրեց ու գնաց էրե-խեքի խետ խաղալու:

Ջախսճիանի կնիկը գնաց ջաղաչը, մարթին ասավ, որ տղեն ինչ խաոցուց:

Մարթը-կնիկ որոշին տղին դուզն ասեն, որ հիրանց տղեն չի, թաքավորի թոռն ա: Էկան տուն: Հիրկուն նստան խաց ուտելու:

Տղեն ջախսճիանին ասավ. — Հայրի՛կ, իմ գլոխն էլ չի ցավում, մատս էլ, հըմա աղեն չի թողում, որ ես հաոցկեմ, պաճառն ինչ ա, որ կապըմ եք:

Հերն ասավ. — Տղա՛ ջան, մենք չեզի բոներ ենք ջախճի հաո-վից, տասը տարի հանեչ ու դաոցրեր ենք մեր տղեն, հըմա դու մեր տղեն չես, խեր էլ ունես, մեր էլ: Մերտ շատ նեղուլթունի մեչ ա: Ջանքի հիմի չեզի չինք ասում, ասում ինք՝ էրեխա յա, հիմի որ ջոջեր ես, ասում ենք:

Տղեն մնաց չիվար, չըկաոցավ խոսա:

Ետո ասավ. — Բա հո՞ւր են իմ հերն ու մերը:

— Բո խերը թաքավորի տղեն ա, քո մերն էլ օխտը ճամ-բի մեջտեղը կբրե կարասի մեչը դրուկ ա: Թաքավորի հրամանով գացող-էկողը թքում ա հերեսը, որ խոսկ ա տվե ոսկե չնչուլ, ոսկե ճկուլթ տղա բերա, շան թուլն յա բերե: Մենք չեզի քթանք էն օրը, որ քո մորը դրին կբրե կարաս: Էրեւում ա, որ տատմերը քո տեղակ շան թուլա յա դրե մորտ մոտ, չեզի ջուրն ա քցե: Բալա՛ ջան, քո գլոխը կապում ենք ընդրա խըմար, որ քո չնչուլը ոսկի յա, ճկուլթտ էլ ոսկի ա: Թաքավորը որ հիմանա ջախսճիանը ոսկե չնչուլ տղա

ունի, հինքը չունի, նախանձից կըսպանա, մենք էլ կապինք, որ տենող չըլնի:

Տղեն ասավ.—Հայրի՛կ ջան, հառավոտ էթանք, մորս քթնենք: Դու գատը կայնի, ես կէթամ մոտ, ընդուց ետո ինչ կըլնի, թո չըլնի:

Հառավոտ, լուսը բացվի ձեր վրին, բացվա՛վ ըտոնց վրեն, հելան գացին թրա թաքավորի խառը:

Որ մոտցան, մնաց մե վերստ ճամբա, ջախճփանն ասավ.—Ես էլ էն յանը չեմ էթա: Էն յան էթողը բղի թքա անբախտ կնգա վրեն, որ չըթքա, գլխը կըկղրեն: Ընդե տասը պահակ ա կայնուկ:

Տղեն ասավ.—էթանք, հայրի՛կ, մեզի ձեռ տվող չի չըլնի:

Ջախճփանը վախվխելով գնաց տղի հետևից:

Գացին, խասան կրբե կարասի մոտ: Ջախճփանը գլխը կախեց, կայնա՛վ:

Տղեն վազավ մոտ, մոր հերեսի չորը վեռուց, էրկու հերեսն էլ պաչեց ու լացավ.—Մե՛ր ջան, ես քո տղեն եմ, իմ հերեսը դու չես տես: Իմ տեղ չան թուլն են դրե քո ծոցը:

Ասավ ու գլխն էլ բացեց, ճկութն էլ:

Մերը որ էս տեսավ, փաթթվեց տղի վզով, սկսեց լնլ: Պահակները ջղայնացան, թե հնչի թաքավորի հրամանին դեմ ա էթում:

Տղեն ասավ.—Գնացեք թաքավորին էլ, տղին էլ, վազրին էլ, վաքլին էլ կանչե՛ք ըստե, ես ընդոնցը պատասխան կըտամ:

Պահակները որ տեսան տղեն յաման լիզու ունի, մացին չիվար: Պահակներից մեկը գնաց, թաքավորին ասավ, ինչ որ տեսել էր: Թաքավորն էլ, տղեն էլ, վազիրն ու վաքլին էլ, իշխաններն էլ հելան էկան:

Տղեն ասավ.—Թաքավո՛ր, դու լավ ստուգե՞ր ես, որ քո խառը տղա չի բերե, չան թուլն յա բերե:

Թաքավորը տեսավ՝ տղեն շատ սրտով ա խոսում, փորը կասկած հընգավ, ասավ՝ ստուգե՛ր եմ:

—Չեզի խափեր են, թաքավո՛ր, չեզի մեամտի տեղ են դրե, դու էլ հավատացեր ես: Ո՞նց կըպատահի, որ մարդ չան թուլն բերա: Էտ տեսակ բան հեչ կըպատահի՞: Կանչա՛, թո գան իմ մորքուրներն ու տատմերը:

Ծառաները գացին տատմորն ու մորքուրներին կանչին:

Տղեն դառնալով վազիր-վաքլիին ասավ.—Որ ձեր թաքավորն էսենց անօրենք գործեր ա անում, դուք խորուրթ չե՞ք տալում, որ էտենց չանա:

Վազիրն ասավ.—Ա՛յ տղա, ի՞նչ ես վլվլցնում, դու ո՞վ ես, որ թաքավորի հրամանին դեմ ես էթում: Թաքավորի խոսկը օրենք ա: Էս կնգան մե քուրը խոսկ տվեց խալիչա գործա, խսիլ էլ չըկառցավ

գործա, մե քուրն էլ խոսկ տվեց, որ օխտ տեսակ ճաշ էփա, վոհկ էլ չըկաոցավ էփա, էս կնիկը խոսկ տվեց ոսկե չնչուլ տղա բերա, շան թուլան բերեց: Իրեք քուրն էլ մե սանդրի կտավ են:

Տղեն ասավ.—Թաքավորը, դու, վաքիլը երգիր եք կառավարում, հո մեկ չեք: Եզանը ճիպոտով են քչում, ձիանը՝ պլեթով, էշին էլ բզում են: Դուք իրեք քվորն էլ «մե սանդրի կտավ» եք հնչվում: Հիմի կըտենանք, ամմեն բան կըպարզվի:

Թաքավորի հղրկած մառթիկ քթան տատմորն էլ, մորքուրնե-րին էլ բերին:

Տղեն տատմորը խառցրեց.—Դո՞ւ իր տատմորը, որ թաքավորի խառը շան թուլան բերեց:

—Ես ի:

—Դու տեսա՞ր, որ շան թուլան բերեց:

Պառավի լիզուն կապ հընգավ: Հիչկաց վազրի ու վաքլի խառսի յանը:

—Պատասխան տուր, ջադո՛ւ պառավ, դու տեսա՞ր, որ թաքավորի խառը շան թուլան բերեց:

—Տղա՛ ջան, թո էտ էրկու կնիկը պատասխան տան, ինչ հելեր ա, ըտոնք են արե:

Ժողովուրթն էլ, թաքավորն էլ տեղմատեղ քարցեք ին:

Վազրի ու վաքլի խառսն էլ չըկաոցան պատասխան տան, լիզունները բռնվավ:

Տղեն ջախճփանին ասավ.—Ա՛յ խեք, արի՛ հառաչ, ամեն ինչ դո՛ւզն ասա:

Ջախճփանն էկավ իմալ հելեր էր, ասավ:

էտ վախտ տղեն գլոխը բացեց, ձկուլթը նշանց տվեց: Ժողովուրթն ուրախութունից լնլում էր:

Թաքավորի խառսին կբրե կարասից խանին, տարան բաղնիք լողացրին, տարան պալատը:

Պառավին, վազրի խառսին ու վաքլի խառսին կապին իրեք դաթրի պոչից ու դաթրներին բաց թողին: Ղաթները խորնան հընգան չոլերը:

Հիրկուն էկան տուն: Մինանկ գլխներն էր մնացե պոչից կպուկ. էն էլ էնքան չուֆրով տվե, հըղեղները դուս էր էկե:

Լուուց ետո թաքավորին, վազրին, վաքլին եռացրին, թաքավոր դաոցավ ոսկե չնչուլի խեքը, նոր վազիր ու նոր վաքլի հընդրեց:

Ընդոնք խասան հիրանց մուրազին, դուք էլ խասանեք ձեր մուրազին: